Տեխնիկայի գնման հայտարարություն

❍ Կազմակերպության մասին

«Փոփոխություն» սոցիալ-առողջապահական հասարակական կազմակերպությունը («Փոփոխություն» ՀԿ) կնոջ եւ քվիր մարդու առողջության իրավունքի (շահա)-պաշտպանությամբ զբաղվող հարթակ է, որի նպատակն է փոխել Հայաստանում սոցիալ-առողջապահական համակարգը՝ մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականությունների ու ծառայությունների զարգացման միջոցով:
«Փոփոխություն» ՀԿ մասին հավելյալ տեղեկատվություն հասանելի է կայքէջում՝ www.changengo.org

❍ Ծրագրի մասին

«Առողջության իրավունք. բովանդակություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի՝ ԵՄ ֆինանսավորմամբ ընթացող «Դիմակայուն քաղաքացիական հասարակություն Արեւելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագրի շրջանակում: Ծրագրի ենթադրամաշնորհները համաֆինանսավորվում են Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից:
Ծրագրի շրջանակներում «Փոփոխություն» ՀԿ-ն, ի թիվս այլ գործողությունների, ձեռք է բերելու տեխնիկա՝ թվային ֆոտոխցիկ, լույսեր, անլար բարձրախոս եւ եռոտանի հենարան:

❍ Տեխնիկայի նկարագիրը

Ստորեւ ներկայացված են տեխնիկայի նկարագրերը՝ նվազագույն պահանջներով: Ընդունելի են նաեւ առաջարկներ՝ ավելի բարձր կամ համարժեք տեխնիկական հնարավորություններով մոդելիների վերաբերյալ:

1. Թվային ֆոտոխցիկի նվազագույն տեխնիկական բնութագիր

- Քանակը՝ 1 հատ
- Էկրանի չափը՝ 3.0”
- Էկրանի տեսակը՝ LCD
- Թույլատրելիություն՝ առնվազն 1,620,000 փիքսել
- Միացումներ՝ Bluetooth, USB, HDMI, Wi-Fi
- Մատրիցայի չափսեր՝ 36 x 24 մմ (Full Frame), տեսակը՝ CMOS, մեգապիքսելներ՝ առնվազն 24

- Ֆայլերի տեսակ՝ JPEG, RAW, MP4 (վիդեո)
- Նկարահանման արագություն՝ առնվազն 7 կադր/վրկ
- Տեսանկարահանում՝ 4K 30 FPS (Ultra HD 3840x2160)
- Հիշողության կրիչի հնարավորություն՝ SD, SDHC, SDXC, UHS-I կամ UHS-II
- Զուգակցելի ոսպնյակ (առանձին կամ հավաքածուով)
- Ոսպնյակի բնութագիր՝ 24-105 մմ, F/4 կամ համարժեք
- Կիզակետային գոտիներ՝ առնվազն 9
- Պրոցեսոր՝ բարձր արդյունավետության պատկերի մշակում (օր.՝ DIGIC 6+ կամ համարժեք)

2. Լույսերի նվազագույն տեխնիկական բնութագիր

- Քանակը՝ 1-2 հատ
- Տարածական լուսավորության ապահովում՝ լուսանկարների եւ տեսագրություններ համար
- Պորտատիվ (տեղաշարժվող) կառուցվածք
- Լուսարձակման կարգավորվող ինտենսիվություն (brightness)
- Գունային ջերմաստիճանի կարգավորում (color temperature)
- Լիցքավորվող մարտկոց կամ սնուցում հոսանքից

3. Անլար բարձրախոսի նվազագույն տեխնիկական բնութագիր

- Քանակը՝ 3 հատ
- Անլար համակարգ (wireless lavalier կամ handheld)
- Հստակ ձայնագրություն նույնիսկ միջին տարածության դեպքում
- Նվազագույն խլացում | աղմուկի ճնշում
- Լիցքավորվող մարտկոց
- Միացման հարմարություն՝ ֆոտոխցիկի եւ համակարգչի հետ (3.5mm կամ USB)

4. Եռոտանի հենարանի նվազագույն տեխնիկական բնութագիր

- Քանակը՝ 1 հատ
- Ամուր եւ կայուն կառուցվածք
- Կարգավորվող բարձրություն
- Համատեղելի ֆոտոխցիկի հետ
- Միջին չափի, թեթեւ տեղափոխման համար
- Առնվազն 2 կգ ծանրության դիմացկունություն

❍ Հայտադիմումների մանրամասներն ու վերջնաժամկետը

Հետաքրքրված կազմակերպությունները եւ | կամ անհատ ձեռնարկատերերը պետք է ներկայացնեն իրենց գնառաջարկը մինչեւ 2025 թվականի հունիսի 18-ը, ժամը՝ 20:00-ն՝ նամակ ուղարկելով հետեւյալ էլ–փոստին՝ info@changengo.org

Գնառաջարկը պետք է ներկայացնել՝ լրացնելով ձեւաչափը, որը հասանելի է հղմամբ

Գնառաջարկը պետք է ներառի ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը՝ բացառությամբ ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ).
«Դիմակայուն քաղաքացիական հասարակությունը Արեւելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, հետեւաբար բոլոր գնումները կատարվելու են առանց ԱԱՀ-ի:

❍ Որոշումների կայացման գործընթացը

«Փոփոխություն» ՀԿ թիմն ամփոփելու է գնառաջարկներն ու որոշում է կայացնելու գին եւ որակ համադրությամբ՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մաս–նակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել «Փոփոխություն» ՀԿ թիմի հետ՝ նամակ ուղարկելով info@changengo.org էլփոստին